

**ՀԱՅ ԲԱՐՐԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Հ. Դ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

Հայ բարբառագիտությունը, որպես ինքնուրույն գիտություն, ձևավորվեց ու իր առաջին քայլերն արեց դեռևս անցյալ դարի կեսերին, երբ պատմա-համեմատական լեզվաբանության ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց աստիճանաբար սկսեց աճել նաև լեզվաբան-հետազոտողների հետաքրքրությունը դեպի ժողովրդական լեզվի կենդանի դրսևորումները:

Բարբառագիտության զարգացումը մեզանում անխզելիորեն կապված է Հրաչյա Աճառյանի անվան հետ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ գիտության այդ բնագավառի առաջընթացը, հատկապես վերջին 50 տարիների ընթացքում, մեծապես կանխորոշված է եղել այդ անվանի գիտնականի ուսումնասիրություններով: Աճառյանն էր, որ առաջին անգամ կատարեց հայ բարբառների ձևաբանական հստակ դասակարգում, ուսումնասիրեց, նկարագրեց ու դասակարգման ենթարկեց շուրջ երեք տասնյակի հասնող բարբառներ, մշակեց բարբառների մենագրական ուսումնասիրության ուրույն սկզբունքներ և դրանք փիրառեց իր հետազոտությունների մեջ: Բարբառագիտության տեսության հարցերի մշակման հետ միասին նա ուսումնասիրեց հայերենի շուրջ տասը բարբառներ, որով և ստեղծեց իր՝ աճառյանական դպրոցը: Հետագայում բարբառների մենագրական ուսումնասիրությունները կատարվում են հիմնականում Աճառյանի մշակած մեթոդով:

Այս բոլորը միասին որոշակի հունի մեջ դրեցին հայ բարբառագիտության զարգացումը, որը հիմնականում ընթացավ մի կողմից տեսական որոշ հարցերի մշակման և, մյուս կողմից՝ առանձին բարբառային միավորների նկարագրության ու ուսումնասիրության ուղղությամբ:

Տեսության մեջ երկար ժամանակ ամենահիմնական հարցը բարբառների դասակարգման ռացիոնալ չափանիշների որոնումը և դրանց գիտական հիմունքների մշակումն էր: Այս բնագավառի առաջին խոշոր նվաճումը բարբառների դասակարգման ձևաբանական սկզբունքի առաջաշումն էր (Հր. Աճառյան), որը և դարձավ հայ բարբառագիտության տեսության հիմնաքարերից մեկը նրա զարգացման ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում: Այդ դասակարգման հիմքում դրվեց բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության ձևական արտահայտությունը: Այդ հիմունքով հայերենի մինչ այդ հայտնի բարբառները (շուրջ 30) դասդասվեցին երեք խմբերում, որոնք որպես ճյուղեր ստացան «ում», «կը», «ել» անվանումները: Այս նույն հիմքի վրա պրոֆ. Ար. Ղարիբյանը ընդարձակեց բարբառային խմբակցությունների շրջանակները՝ ճյուղերի քանակը երեքից հասցնելով յոթի («ում», «կը», «լ», «ս», «կա», «նա» և գրաբառակերպ):

Հետագայում բարձրագույն տիպաբանական դասակարգման փորձը ևս արվում է նույն ձևաբանական դասակարգման հիմքի վրա՝ նրա արդյունքների ամփոփմամբ ու նոր մեկնաբանությամբ (Ար. Ղարիբյան, էդ. Աղայան):

Բարձրագույն ձևաբանական դասակարգմանը զուգընթաց՝ առաջ է քաշվում նաև նրանց հնչյունական դասակարգման սկզբունքը (Ար. Ղարիբյան), որի մեջ բարձրագույն խմբակցությունների որոշման համար հիմք են ծառայում պայթական և կիսաշփական բաղաձայնների լծորդական շարքերը: Ընդ որում, նշված շարքերը որոշելիս հաշվի են առնվում նրանց պատմական փոփոխությունները: Այդ նպատակով նախապես համեմատության եզր է ընդունվում պայթականների գրաբարյան համակարգը և որոշվում բարձրագույն միավորներում տվյալ համակարգի համեմատությամբ բաղաձայնների կրած փոփոխությունները: Դասակարգման արդյունքում ստացվում են յոթ բարձրագույն խմբակցություններ, որոնցից յուրաքանչյուրին տրվում են անվանումներ՝ համաձայն հայկական բաղաձայնների շարքերի քանակի (երկաստիճան, եռաստիճան, քառաստիճան) և այս կամ այն շարքի բացակայության (ձայնեղազուրկ, խլազուրկ): Այս դասակարգմամբ լռելայն ընդունվում է, որ ժամանակակից բարձրագույն բաղաձայնների ներկա վիճակը հին հայերենի (գրաբարի) համապատասխան բաղաձայնների պատմական փոփոխություններն են, որոնք տարբեր վայրերում կատարվել են տարբեր ուղղություններով: Հետագայում Ար. Ղարիբյանն իր հնչյունական դասակարգման մեջ համեմատության եզրը դարձնում է հնդեվրոպական միասնության շրջանի բաղաձայնական համակարգը: Թեև այս դասակարգման ժամանակ ևս բարձրագույն խմբավորվում են յոթ տիպերի մեջ, բայց, համեմատության եզրի փոփոխման պատճառով, փոխվում է նաև բարձրագույն առաջացման ժամանակագրությունը: Եթե առաջին դեպքում հայերենի բոլոր բարձրագույնը դիտվում էին որպես հտգրաբարյան գոյակցություններ, ապա այս դեպքում հնդեվրոպական բաղաձայնական համակարգին մոտ կանգնած բարձրագույնը համարվում են ավելի հին, քան գրաբարյան և նրանից առաջացած համակարգերն են:

Հնչյունական դասակարգման տվյալների օգտագործմամբ փորձեր են արվում որոշելու հայ բարձրագույնի ծագման, մի կողմից՝ նրանց ու հին հայերենի (գրաբարի) և, մյուս կողմից, հնդեվրոպական լեզվի հետ ունեցած փոխհարաբերության հարցերը: Այս և հարակից այլ խնդիրների շուրջը 1958—1962 թթ. ընթացքում Հայաստանի և միութենական գիտական հանդեսներում ծավալված բանավեճը իր արդյունքներով օգտակար շատ բան տվեց ինչպես հայ բարձրագույնությանը, այնպես էլ հայոց լեզվի պատմությանը: Բանավեճը, մի շարք հարցերի մեջ պարզություն մտցնելով, միաժամանակ հայ բարձրագույնության առջև դրեց նոր խնդիրներ ու պրոբլեմներ:

Հայ բարձրագույնության մեջ ձևաբանական և հնչյունական դասակարգման սկզբունքների կիրառումը ունեցել է ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն: Այն մեծապես խթանել է բարձրագույն նոր միավորների հայտնաբերմանը և դրանց գիտական նկարագրությանը: Մենագրական ուսումնասիրության են ենթարկվել տերիտորիալ նոր՝ մինչ այդ գիտությանը անհայտ (կամ հայտնի, բայց դեռևս չնկարագրված) բարձրագույն: Բավական է ասել, որ եթե ձևաբանական դասակարգման կիրառման սկզբնական շրջանում գիտությանը հայտնի բարձրագույնի թիվը հասնում էր շուրջ երեսունի, ապա այս շրջանում նրանց թիվը հաշվվում է վաթսուներից ավելի:

Բարբառների ուսումնասիրության ու հրատարակության գործը աշխու-
ժանում է հատկապես 1950 թ. լեզվաբանական հայտնի բանավեճից հետո,
երբ վերացվում են Ն. Յա. Մառի ուսմունքի տիրապետության շրջանում լեզ-
վաբանության զարգացմանը արգելակող խոչընդոտները: Այդ ժամանակից
սկսած մեկը մյուսի հետևից հրատարակվում են առանձին բարբառների նկա-
րագրությանը նվիրված մենագրական ուսումնասիրություններ: Հայագիտա-
կան հանդեսներում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, հաղորդումներ,
որոնց մեջ նկարագրվում, լուսաբանվում և քննարկվում են բարբառային նոր
միավորների լեզվական այս կամ այն մակարդակի առանձին երևույթների ա-
ռանձնահատկությունները, հնչյունական ու քերականական այլևայլ երևույթ-
ներ:

Այս առաջընթացը մասամբ պայմանավորվում է նաև նրանով, որ բար-
բառագիտությունը որպես գիտական դիսցիպլին մտնում է բուհերի մասնագի-
տական ֆակուլտետների ծրագրերի մեջ: Այդ ծրագրերին համապատասխան
գրվում են դասագրքեր (Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953 թ.,
Ահ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, 1957 թ.): Ասպիրան-
տուրայի և հեռակա ուսուցման միջոցով պատրաստվում են բարբառագիտա-
կան կադրեր, գրվում են դիսերտացիոն աշխատանքներ: Հայաստանի գիտու-
թյունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության
բաժնում ստեղծվում է բարբառագիտական խումբ, որը 1972 թ. սկզբներին
վերափոխվում է բարբառագիտության բաժնի: Լեզվի ինստիտուտը դառնում է
այն հիմնական օջախը, որտեղ ծրագրված ձևով գրվում և լուծվում են բար-
բառագիտական պրոբլեմներ, պատրաստվում և աճեցվում են բարբառագիտա-
կան կադրեր: Այստեղ առաջադրվում և կատարվում են կարևոր կոմպլեքսա-
յին թեմաներ:

Գիտական օջախներում կատարվող բարբառագիտական աշխատանքները
և առանձին մենագրական ուսումնասիրությունների պարբերական հրատարա-
կությունները մտավորականության շրջանում մեծ հետաքրքրություն են առա-
ջացնում մայրենի բարբառների, նրանց լեզվական առանձնահատկություննե-
րի նկատմամբ: Հանդես են գալիս բավական թվով սիրող-հետազոտողներ, ո-
րոնք հրատարակված աշխատությունների օրինակով կատախում են իրենց
մայրենի բարբառի կամ խոսվածքի նկարագրական ուսումնասիրությունը,
կազմում են բառարաններ աւ բառացանկեր, գրի են առնում տեքստեր ու բա-
նահյուսական նմուշներ: Այդպիսի աշխատանքներ են կատարվել Խոտորըշուրի,
Շամշադինի, Գանձակի, Վաղարշապատի, Մոկաց գավառի որոշ վայրերի, Ա-
գուլիսի, Քեսարի, Խիզանի, Նոր Բայազետի, Նոր Նախիջևանի, Արարկիի և
այլ վայրերի բարբառների աւ խոսվածքների ուսումնասիրության ուղղությամբ:

Այս ուղին ժամանակներում առանձին բարբառների նկարագրություններ
և բարբառագիտական նյութեր հրատարակվում են նաև սփյուռքում: Այստեղ
հատկապես արժեքավոր են պատմական Հայաստանի առանձին բնակավայ-
րերին նվիրված պատմա-ազգագրական ուսումնասիրությունները, որոնց մեջ
տվյալ բնակավայրի պատմության, աշխարհագրության, տնտեսության, կեն-
ցաղի, բարքերի, հավատալիքների, սովորությունների և այլ բազմաթիվ պատ-
մա-ազգագրական հարցերի քննության հետ միասին՝ նկարագրվում կամ տե-
ղեկություններ են հաղորդվում նաև այդ վայրերում խոսված կամ խոսվող

բարբառների ու խոսվածքների մասին, բերվում են բարբառային նմուշներ, գավառական բառերի ցանկեր, մեկնաբանություններ և այլն:

Բարբառների ուսումնասիրության համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն նաև ազգագրական ու բանահյուսական այն բնագրերը, որոնք հրատարակվել և այժմ էլ շարունակվում են հրատարակվել Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության ու ազգագրության ինստիտուտի աշխատակիցների ջանքերով: Մինչև այժմ հրատարակված բանահյուսական այնպիսի բնագրեր, ինչպիսիք են, օրինակ, «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպի պատումները և «Հայ ժողովրդական հեքիաթների» հատորները, հսկայական նյութ են պարունակում հայ բարբառների ուսումնասիրության համար:

Այսպիսով, բարբառների վերաբերյալ կուտակված է հսկայական փաստական նյութ, որը հնարավորություն է տալիս հստակորեն տարրորոշելու նրանց փոխհարաբերության հարցերը, ի նորոգ դնելու և լուծելու բարբառագիտության տեսության մի շարք խնդիրներ:

Վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել են հաղթահարվել բարբառագիտության մեջ արդեն հնացած, բայց արմատացած որոշ պատկերացումներ և ըմբռնումներ: Փորձեր են արվում ուսումնասիրության նոր մեթոդներ կիրառելու ուղղությամբ: Դա հաջողվում է հատկապես հնչյունաբանության բնագավառում, երբ բարբառների հնչույթային կազմը որոշելու համար կատարվում են հնչույթաբանական վերլուծություններ:

Կուտակված հսկայածավալ փաստական նյութը, մյուս կողմից, հնարավորություն է տալիս համեմատության ոլորտի մեջ առնելու ավելի շատ բարբառային միավորներ: Ավելի ու ավելի որոշակի է դառնում բարբառների համեմատական ուսումնասիրության նոր մեթոդների կիրառման անհրաժեշտությունը և այդ հիմքի վրա՝ բարբառների միահատկանիշ դասակարգման միակողմանիությունը: Հատկապես աչքի է ընկնում այն փաստը, որ լեզվական համարյա նույնատիպ երևույթներ տենցող բարբառները, որոնք իրականում ավելի մոտ փոխհարաբերությունների մեջ են, քան կարելի է ենթադրել, առանձնացվում են տարբեր ճյուղերում միայն այն պատճառով, որ ըստ ձևաբանական կամ հնչյունական դասակարգման իրարից տարբերվում են ընտրված այդ մեկ հատկանիշով:

Միահատկանիշ դասակարգման թերի կողմերի քննադատությանը զուգընթաց որոշակի քայլեր են արվում դասակարգման ավելի ռացիոնալ մեթոդներ մշակելու ուղղությամբ: Այս տեսակետից հայ բարբառագիտության արդի էտապի ամենանշանակալից երևույթը Գ. Բ. Զահուկյանի կողմից առաջարկվող՝ բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգումն է, որ նա շարադրել է վերջերս հրատարակված «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ: Այս աշխատությունը ուշագրավ է ոչ միայն նրանով, որ գրված է գիտության արդի մակարդակի պահանջներին համապատասխան շափանիշներով, այլև նրանով, որ աչքի է ընկնում իր առաջ քաշած հարցերի և դրանց լուծման ինքնատիպությամբ: Այստեղ առաջադրված են, քննված և մասամբ լուծված հայ բարբառների համաժամանակյա և տաբաժամանակյա ուսումնասիրության մի շարք կարևոր խնդիրներ: Ժամանակակից հայ բարբառների դասակարգման համար մշակված բազմահատկանիշ վիճակագրական սկզբունքները կիրառված են նաև հայերենի պատմական զարգացման տարբեր էտապների բարբառների ուսումնասիրության մեջ: Այդ

սկզբունքների կիրառությամբ փորձ է արվել պարզելու գրական լեզուների և բարբառների, ինչպես նաև բարբառների իրար նկատմամբ ունեցած փոխհարաբերության հարցերը հայոց լեզվի պատմության տարբեր շրջաններում: Առաջին անգամ այս մենագրության մեջ բարբառների փոխհարաբերությունը որոշելու համար օգտագործվել է բառավիճակագրական մեթոդը: Քննված են հայ բարբառների հնչյունա-քերականական և բառական հնաբանություններն իրենց արտահայտության բազմազան ձևերով: Աշխատությունն ամբողջությամբ վերցրած (չնայած նրանում առկա որոշ հարցերի անբավարար մշակվածության և որոշ վիճելի կետերի) ծրագրային նշանակություն կունենա հայ բարբառագիտության զարգացման համար:

Բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման հիմքում դրված են 50 հնչյունական և 50 քերականական տարբերիչ հատկանիշներ: Հնչյունական հատկանիշների մեջ 25-ը ձայնավորական են, 25-ը՝ բաղաձայնական: Քերականական հատկանիշները ևս համամասնորեն բաժանված են. 25-ը անվանական, 25-ը՝ բայական: Մինչև 22 այդպիսի տարբերակիչ հատկանիշ ունեցող բարբառային միավորները դիտվում են որպես խոսվածքներ, 22,5-ից մինչև 44-ը՝ բարբառներ, 44,5-ից բարձր՝ բարբառախմբեր: Ըստ այդմ դասակարգման արդյունքում տեսցվում են նախ՝ բարբառաչին երկու խոշոր խմբակցություններ՝ արևմտյան և արևելյան: Դրանցից ամեն մեկը իր մեջ ունի համապատասխանաբար 7 և 4 բարբառախմբեր՝ աշխարհագրական կամ պատմա-աշխարհագրական անվանումներով: Բարբառախմբերն իրենց հերթին կազմված են բարբառներից, սրանք էլ խոսվածքներից: Այս դասակարգմամբ բարբառների ընդհանուր թիվը հասնում է 44-ի (նախկինում բարբառներ դիտված շատ միավորներ այստեղ իջեցված են խոսվածքների աստիճանի):

Թեև այս դասակարգման սկզբունքներն իրենց մանրամասներում դեռևս կարոտ են հետազա մշակման, այնուամենայնիվ, նրա առավելությունն այն է, որ առաջնորդվելով օբյեկտիվ չափանիշներով կարողանում է հաղթահարել միահատկանիշ դասակարգման սահմանափակությունը:

Այս դասակարգումը նախորդների (ձևաբանական և հնչյունական) համեմատությամբ ունի հետևյալ առավելությունները:

ա) Սկզբունքների հիմքում դրված բազմահատկանիշությունը և վիճակագրական (քանակական) չափանիշը դասակարգումը դարձնում են գիտականորեն անառարկելի, քանի որ դժվար թե հնարավոր լինի ապացուցել, թե մեկ հատկանիշը ավելի շատ բան կարող է ասել ուսումնասիրվող օբյեկտի էության մասին, քան նման հատկանիշների մի ամբողջություն: Առարկել, իհարկե, կարելի է այս կամ այն տարբերակիչ հատկանիշի նվազ արժեքայնության դեմ, կարելի է այս կամ այն հատկանիշի փոխարեն առաջարկել մի այլ հատկանիշ, կարելի է ավելացնել կամ կրճատել (սահմանափակել) տարբերակիչ հատկանիշների քանակը և այլն, և այլն, բայց դրանցից և ոչ մեկը չի փոխի այս դասակարգման ներքին էությունը: Ընդհակառակն, այդ պահանջներն ավելի կճշգրտեն դասակարգման հիմքում դրված չափանիշները:

բ) Ընտրված տարբերակիչ հատկանիշների փոփոխությունը հնարավոր է դառնում բարբառային միավորները դասդասել այնպիսի մի աստիճանական ենթադասությամբ, երբ յուրաքանչյուր մի այդպիսի ենթադասության շղթայի մեջ մտնող բարբառները միավորվում են ոչ թե մի հատկանիշի, այլ մի փունջ հատկանիշների միջոցով և ծագումնաբանորեն ու պատմական զար-

գացման իրենց տնտեսական կապերի մոտ են իրար, քան տարբեր ենթագա-
սության մեջ մտնող բարձրագույն միավորները: Դրանով էլ հաղթահարվում է
միահատկանիշ դասակարգման հիմնական թերությունը, երբ դասակարգման
հիմքում դրված մի հատկանիշով միավորված բարձրագույն միավորները ոչ
բոլոր դեպքերում են իրար հետ կապվում հիմնական հատկանիշներով և
շատ հաճախ ավելի մոտ են այլ խմբավորումների մեջ մտնող միավորներին:

դ) Բազմահատկանիշ դասակարգման հիմքում դրված սկզբունքները
հնարավորություն են տալիս որոշակի օբյեկտիվ չափանիշներ դնել բարձ-
րագույն միավորների տարբերակման հիմքում: Այստեղ դասակարգումը ոչ թե
նպատակ է բարձրանալու բաժանելու առանձին խմբերի կամ ճյուղերի, այլ մի-
ջոց է որոշակիորեն պարզելու բարձրանալու միջև եղած բազմաթիվ փոխհարա-
բերությունները, որոշակի սահմաններ դնելու խոսվածքները բարձրանալից,
բարձրանալու բարձրագույն խմբերից տարբերակելու չափանիշների միջև: Այլ
կերպ ասած, այստեղ դասակարգումը բազմապլան է և գնում է ամենանվա-
զագույն միավորից դեպի ամենախոշորը:

դ) Իր հիմքում ունենալով հարյուրից ավելի հնչյունա-քերականական
տարբերակիչ հատկանիշներ, նոր դասակարգումը, բնականաբար, բարձրա-
ները չի դիտում որպես մեկը մյուսից անջրպետված կամ որոշակի սահմաննե-
րով անջատված միավորներ: Ընդհակառակը, բազմահատկանիշ դասակար-
գումը հաստատում է արդի լեզվաբանության այն հանրահայտ թեզը, թե
բարձրանալու խիստ ընդգծված տերիտորիալ սահմաններ չունեն: Այս իսկ
տեսակետից Գ. Ջահուկյանի դասակարգման եզրահանգումները կարծես թե
կանխատեսում են լեզվաբանական աշխարհագրության մեթոդների կիրառու-
թյունից սպասվելիք արդյունքները:

ե) Դասակարգման այս մեթոդը որոշ չափով նաև ունիվերսալ է: Այն կի-
րառելի է ոչ միայն բարձրանալու զարգացման արդի էտապի, այլև պատմա-
կան այն բոլոր էտապների համար, երբ բարձրագույն տարբերակման համար
բավարար տվյալներ կան գրավոր աղբյուրներում:

Այն դրականն ու արժեքավորը, որ արվել է հայ բարձրանալու ուսումնա-
սիրության բնագավառում (թե՛ տեսության մեջ և թե՛ գործնականում), ինչ-
պես նաև այդ կապակցությամբ կուտակված հարուստ փաստական նյութը,
հիմք են տալիս առաջադրելու նաև մի շարք հեռանկարային պրոբլեմներ, ո-
րոնց լուծումը անմիջականորեն բխում է ոչ միայն արդի լեզվաբանության
պահանջներից, այլ առաջին հերթին՝ հայոց լեզվի պատմության մի շարք հան-
գուցային հարցերի լուսաբանման անհրաժեշտությունից:

1. Այսօր արդեն անհետաձգելի ու առաջնակարգ նշանակություն է ստա-
նում հայ բարձրանալու լեզվաբանական ատլասի ստեղծման հարցը: Պրոբլե-
մի այժմեականությունն ու հրատապությունը կայանում է նրանում, որ առան-
ձին բարձրանալու ուսումնասիրության արդյունքները և այդ բնագավառում
հավաքված հսկայածավալ նյութը այսօր առաջադրում և պահանջում են տե-
սական ու գործնական մի շարք այնպիսի խնդիրների լուծում (կապված հայ
ժողովրդի և նրա լեզվի պատմության հետ), որ հնարավոր չէ անել առանց լեզ-
վաբանական աշխարհագրության:

Սակայն հենց այժմ սկսել հայ բարձրանալու ատլասի կազմումը՝ հնարա-
վոր չէ մի շարք բարձրանալու ու խոսվածքների մասին մեր գիտելիքների ան-
բավարարության պատճառով: Հետևաբար, ամենաառաջնահերթ խնդիրը այդ

գիտելիքների պակասի լրացումն է, որը կարելի է անել երկու ճանապարհով: Կամ աստիճանաբար մենագրական ուսումնասիրության ենթարկել այն բոլոր բարբառներն ու խոսվածքները, որոնց մասին մեր գիտելիքներն անբավարար են, կամ մեր գիտելիքների պակասը լրացնել զուտ քարտեզագրական նպատակով կատարվող ուսումնասիրություններով: Առաջին ուղին թեև օգտակար, բայց խիստ ժամանակատար է: Որոշակիորեն հնարավոր չէ ասել, թե հայերենի բարբառային բոլոր տարբերակների մասին մեր գիտելիքների պակասի լրացումը երբ կարող է ավարտված համարվել: Մյուս կողմից՝ չենք կարող վստահ լինել, որ բարբառների վերացման ներկա պայմաններում, հետազոտական նման ցածր տեմպերով կկարողանանք առհասարակ որոշ բարբառների մասին բավարար պատկերացում տնենալ: Զօխտելով, որ երբեմն՝ անհրաժեշտությունից լինելով, այս կամ այն բարբառային միավորը կարելի է և պետք է մենագրական ուսումնասիրության ենթարկել, այնուամենայնիվ, քարտեզագրության նպատակով մեր գիտելիքների պակասը լրացնելու հիմնական ուղին պիտի լինի երկրորդը: Ուսումնասիրության այս եղանակի ընտրության դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է բարբառի այն առանձնահատկությունների վրա, որոնք պիտի քարտեզագրվեն: Հետազոտվել կարող են տերիտորիալ առանձին հատվածներ, անկախ բարբառային բաժանվածությունից ու բաշխվածությունից: Կլազմվեն, այսպես կոչված, ռեգիոնալ քարտեզներ, որոնք պատկերացում կտան տվյալ տերիտորիայում խոսվող բարբառների ու խոսվածքների ընդհանրությունների ու տարբերությունների մասին:

Հայ բարբառների ատլասի ամբողջական պրոբլեմի իրականացման համար ամենից առաջ անհրաժեշտ է կատարվելիք աշխատանքի հստակ պատկերացում:

Հայ բարբառների ատլասը, բնականաբար, կազմված պիտի լինի հնչյունական, քերականական և բառային զուգաբանություններ պարունակող քարտեզներից: Նայած այն բանին, թե յուրաքանչյուր մակարդակում հատկանիշների ինչ քանակ է ընտրվում, դրան համապատասխան էլ կորոշվի ատլասի ծավալի հարցը: Հնչյունական, քերականական ու բառային զուգաբանությունների ամենամանրամասն ընդգրկման դեպքում հայ բարբառների ատլասը թեթև կարելի էր կազմել ըստ նշված մակարդակների, դրանցից յուրաքանչյուրին հատկացնելով առանձին հատոր: Բայց հնարավոր է նաև հնչյունական, քերականական ու բառային զուգաբանությունների այնպիսի ընտրություն, երբ քարտեզագրվող ամբողջ նյութը կարող է պարփակվել մի հատորում: Հետևաբար, նախքան քարտեզագրման աշխատանքներին անցնելը անհրաժեշտ է պարզել, թե ինչ ծավալի աշխատանքներ պիտի կատարվեն, ինչ խորությամբ պիտի տանել տարբերակիչ (կամ ընդհանուր, միևնույն է) հատկանիշների բացահայտման ու ընտրության գործը: Մեծապես սրա ճիշտ պատկերացումից է կախված հավաքական աշխատանքի հետագա հաջողությունը:

Քարտեզագրման կարևոր պրոբլեմներից մեկը քարտեզների վրա անցկացվելիք բնակավայրերի որոշման և ընտրության հարցն է: Հայ բարբառների համար այդ պրոբլեմի լուծումը սկզբունքային նշանակություն ունի: Եթե ախտեղ առաջնորդվելու լինենք այն սկզբունքով, թե քանի որ տեսականորեն բարբառային երևույթներն իրենց կենտրոնից դեպի ծայրամասեր զնալիս՝ նվազում են համաշափտեն, ուստի և քարտեզագրման մեջ կարող ենք կիրառել բնակավայրերի ընտրված այնպիսի մի համաշափ ցանց, որի վրա նշված

կետերը իրարից գտնվեն հավասար հեռավորության վրա, ապա այս դեպքում ակնհայտորեն հայ բարբառների մի շարք կարևոր բնակավայրեր իրենց հետաքրքիր բարբառային իրողություններով դուրս կմնան քարտեզագրումից: Պատճառն այն է, որ հայ բնակչության պարբերական գաղթների ու տեղափոխությունների հետևանքով խախտվել է բարբառների զուգաբանությունների այն անընդհատականությունը, որը ինչ-որ ժամանակ հատուկ է եղել նրանց: Հետևաբար, հայ բարբառների ատլասի բնակավայրերի ընտրության համար անհրաժեշտ է կիրառել այլ սկզբունք: Թերևս հարցի ամենաոացիոնալ լուծումը կլինի այն, որ անկախ այն բանից, թե ո՞ր բնակավայրերը կմտնեն քարտեզների մեջ, նյութեր հավաքվեն անխտիր բոլոր հայախոս բնակավայրերից: Դա հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմելու հայ բարբառների և նրանց խոսվածքների փոխհարաբերությունների մասին, որից հետո հեշտ կլինի ընտրել քարտեզագրման համար տիպական բնակավայրերը՝ ըստ այդ բարբառային միավորների մերձավորության աստիճանի:

Ատլասի ստեղծումը, բնականաբար, ենթադրում է աշխատանքների հաջորդական մի բարդ պրոցես, որի մեջ հատկապես ծանր առևտևական պիտի լինի հավաքչական աշխատանքների էտապը: Այլ լեզուների բարբառների ատլասի կազմման պատմությունից հայտնի է, որ այդ էտապը տևել է տասնյակ տարիներ, երբեմն նաև մի ամբողջ հարյուրամյակ: Մեր բարբառների համար էլ այդ էտապը փաստորեն սկսվել է 50 տարի առաջ, առանձին բարբառների մենագրական ուսումնասիրությունների հրատարակությամբ: Տարբերությունն այն է, որ եթե առաջին դեպքում ուսումնասիրությունները կատարվել են զուտ քարտեզագրական նպատակներով, ապա երկրորդ դեպքում նման նպատակ չի հետապնդվել, հետևաբար, և այս դեպքում քարտեզագրությանը հետաքրքրող ինչ-ինչ հարցեր (այդ հատկապես վերաբերում է բառային զուգաբանություններին) կարող են դուրս մնացած լինել հետազոտողների տեսադաշտից: Համեմայն դեպս, հայ բարբառների ու խոսվածքների վերաբերյալ հրատարակված (և ոչ միայն հրատարակված) մենագրական ուսումնասիրությունները բավարար հիմք կարող են տալ քարտեզագրական աշխատանքների համար: Ինչ վերաբերում է բուն հավաքչական աշխատանքին, ապա այն պետք է կազմակերպել միասնական, մասնամասն մշակված, լայնորեն քննարկված ու հաստատված ծրագրով, որը փաստորեն պետք է տա այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք դրվում են քարտեզագրության հիմքում: Այստեղ կարեւոր է որոշել լեզվական այն հիմնական հատկանիշները, որոնք պետք է դրվեն ապագա քարտեզների բովանդակության հիմքում: Այս բնագավառում արդեն որոշ աշխատանք կատարված է, եթե նկատի ունենանք Գ. Զահուկյանի բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման մեջ օգտագործվող շուրջ 100 տարբերակիչ հատկանիշները, որոնք, անշուշտ, քարտեզագրման ավելի ընդարձակ ծրագիր կազմելու բավարար հիմք կարող են տալ:

Նյութերի հավաքման պրոցեսը պետք է կազմակերպվի այն հաշվով, որ աշխատանքների այս էտապում առավելագույն արդյունք ստացվի միջոցների և ժամանակի նվազագույն ծախսմամբ: Այս տեսակետից կարևոր նշանակություն է ստանում նյութերի հավաքման բուն եղանակի որոշումը, Գնալ արդյոք քարտեզագրման ենթակա առանձին հատկանիշների բացահայտման ճանապարհո՞վ, թե՞ մենագրական ուսումնասիրությանը հատուկ միջոցներով բացահայտել նկարագրվող բարբառների ու խոսվածքների էական հատկանիշն-

րը՝ Վերջին դեպքում կարող են նաև երևան բերվել այնպիսի հատկանիշներ, որոնք դուրս են մնացել նախապես ընտրված հատկանիշների ցանկից: Բոլոր դեպքերում պետք է մշակել նյութերի հավաքման մի այնպիսի ռացիոնալ եղանակ, որը իր կատարման տեխնիկայով լինի պարզ ու մատչելի, չպահանջի կատարման մեծ ժամանակ և իր մեջ ընդդրկի հնարավորին չափ ավելի շատ հնչյունական, քերականական ու բառային զուգաբանություններ:

Հայ բարբառների լեզվաբանական ատյասի ստեղծումը մշակութային խոշոր երևույթ կլինի հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Այն կդառնա մեր բազմադարյան լեզվի պատմական զարգացման օրինաչափությունների հայելին: Հմուտ հետազոտողը նրա միջոցով կկարողանա գտնել իրեն հետաքրքրող շատ հարցերի հիմնավոր պատասխանները: Ատլասը հիմք կտա բազմաթիվ ու բազմազան ուսումնասիրությունների, որոնք նվիրված կլինեն ոչ միայն հայերենի պատմության այլազան հարցերի լուսաբանությանը, այլև հայ բնակչության գաղթների ու տեղաշարժերի, այլ ժողովուրդների հետ ունեցած առնչությունների մեկնաբանմանը:

2. Լեզվաբանական աշխարհագրությանը զուգընթաց հայ բարբառագիտությունը մեծ անելիքներ ունի երկու կարևոր բնագավառներում ևս: Դրանցից մեկը համեմատական բարբառագիտությունն է, մյուսը՝ պատմականը: Ձևայած հայերենի բարբառներն իրենց հնչյունական ու քերականական որոշակի տարբերություններով բավարար հիմք են տալիս դրանց համեմատական ու պատմական ուսումնասիրությունների համար, սակայն, այդ երկու բնագավառներում մինչև վերջին ժամանակներս համարյա ոչինչ չի արվել: Բարբառների հնչյունական ու ձևաբանական երևույթների զուգադրական նկարագրությունները, որոնք երկար ժամանակ ոչ ճիշտ կերպով ներկայացվել են (և այժմ էլ ոմանց կողմից ներկայացվում են)՝ որպես համեմատական ուսումնասիրություններ, իրականում շատ հեռու են համեմատական բարբառագիտության նպատակներից ու պահանջներից:

Համեմատական բարբառագիտության նպատակն է՝ ժամանակակից բարբառների համեմատությամբ ու քննությամբ վերականգնել նախնական այն ձևերը, որոնցից առաջացել են համեմատվող ձևերը: Դա մի կողմից օգտակար է տվյալ լեզվի պատմության, իսկ մյուս կողմից՝ իր իսկ բարբառագիտության համար: Համեմատական բարբառագիտությունը հատկապես շատ անելիքներ ունի հայոց լեզվի բնագավառում, եթե նկատի ունենանք, որ նրա տրամադրության տակ են ինչպես հնչյունաբանական ու ձևաբանական ընդգծված տարբերություններով հարուստ բազմաթիվ բարբառներն ու խոսվածքները, այնպես էլ այդ նույն լեզվի հազար հինգհարյուրամյա անընդմեջ գրավոր ավանդությունը: Այս երկուսի օգտագործմամբ բացվում է հայ բարբառների համեմատական ուսումնասիրության լայն ասպարեզ: Համեմատական բարբառագիտության մեթոդներով կատարված ուսումնասիրությունների արդյունքների և նրանցից արված եզրակացությունների ճշտությունը կարող է ստուգվել պատմական շրջանից ավանդված մատենագրության տվյալներով: Այդ երկուսի խելացի համադրությամբ հնարավոր կլինի մշակել ու կիրառել բարբառների համեմատական ուսումնասիրության ուրույն մեթոդներ ու եղանակներ, որոնց արդյունավետությունը կարելի կլինի ստուգել պատմական բարբառագիտության տվյալներով: Համեմատական ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն ճշգրտելու տարբերակիչ հատ-

կանիշներից յուրաքանչյուրի արժեքականությունը խոսվածքային, ենթաբարբառային, բարբառային և բարբառախմբային մակարդակներում և այդ իսկ հիմքի վրա ավելի կատարելագործելու բարբառների դասակարգման սկզբունքները:

3. Որոշակի խնդիրներ ունի լուծելու նաև պատմական բարբառագիտությունը: Դրանք հիմնականում հանգում են հետևյալին. ցույց տալ ժամանակակից հայ բարբառների առաջացման պատմական արմատները և բացատրել դրանց առաջացման պատճառները. որոշել պատմական ամեն մի ժամանակաշրջանում բարբառների բաժանվածությունն աստիճանը, բարբառների՝ ինչպես իրար նկատմամբ, այնպես և գրական լեզուների հետ ունեցած փոխհարաբերության ու տարբերությունների չափը. պարզել նրանց դերն ու տեղը լեզվի պատմության մեջ: Պատմական բարբառագիտության խնդիրն է նաև հետևել բարբառների զարգացման ընթացքին՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, հնարավորության սահմաններում որոշել բարբառների ճյուղավորման և իրարից բաժանվելու մոտավոր ժամանակը, սահմանել պատմական շրջանում առաջացող առանձին լեզվական երևույթների ժամանակագրությունը, բարբառներում առկա հնչյունական, քերականական ու բառային հնարանությունների հիման վրա ուրվագծել նախապատմական շրջանի հայերենի բարբառային բաժանվածության աստիճանը:

Պատմական բարբառագիտության համար որպես աղբյուրներ են ծառայում. ա) ժամանակակից հայ բարբառների և նրանց համեմատական ուսումնասիրության տվյալները: Ժամանակակից բարբառների հնչյունական, քերականական ու բառային տարբերությունների իմացությունը օգնում է պատմական շրջանի գրավոր աղբյուրներում հանդիպող համանման երևույթների մեջ կողմնորոշվելուն, էլ չենք ասում այն մասին, որ համեմատական ուսումնասիրություններն ինքնին հավաստում են այդ երևույթների գոյության փաստը պատմական այս կամ այն ժամանակահատվածում: Այդ նույն միտքն են հուշում նաև լեզվաբանական աշխարհագրության տվյալները՝ հայ բարբառների լեզվաբանական ատլասի և նրա քարտեզներում մշակված հնչյունական, քերականական ու բառային զուգաբանությունները: Պատմական բարբառագիտության խնդիրն է՝ մատենագրական տվյալներով հաստատել տվյալ երևույթի գոյությունը պատմական շրջանում և ճշգրտել նրա ժամանակագրությունը: բ) Պատմական շրջանից ավանդված գրական ու գրավոր հուշարձանները: Բարբառային երևույթների ժամանակագրությունը որոշելու տեսակետից արժեքավոր են հատկապես այն գրավոր աղբյուրները, որոնք սկզբնագիր են բառիս բուն իմաստով: Սրանց մեջ պետք է նշել մասնավորապես հայերեն ձեռագրերի հիշատակարանները և վիմական արձանագրությունները: Վերջիններս նպաստում են նաև որոշակիորեն տեղայնացնելու արձանագրվող բարբառային երևույթները: Պատմական գրավոր աղբյուրներում արձանագրվող բարբառային երևույթների տեղայնացումը չափազանց բարդ, բայց և կարևոր պրոբլեմ է: Քանի որ ոչ բոլոր դեպքերում է, որ գրավոր աղբյուրները տալիս են այդ երևույթները տեղայնացնելու հնարավորություն, ուստի այս դեպքում անհրաժեշտ է գրավոր աղբյուրների տվյալները համադրել ժամանակակից բարբառների տվյալների հետ և սնել տեղայնացման համապատասխան ճշգրտումներ: Գրավոր աղբյուրների ուսումնասիրության բնագավառում որոշակի աշխատանք կատարված է հատկապես հայոց լեզվի պատմության հե-

տազոտության ընթացքում: Գրական լեզուների պատմության ուսումնասիրության ժամանակ այս կամ այն շափով նկարագրվել են նաև բարբառային այն երևույթները, որոնք ժամանակի խոսակցական լեզվի տարբերակներից թափանցել են դրական ու գրավոր լեզվի սահմանները: Բազմաթիվ այդպիսի երևույթներ նկարագրված են վերջերս հրատարակված «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» կոլեկտիվ աշխատության մեջ: Նույնպիսի մանրակրկիտ աշխատանք կատարված է վիմագիր արձանագրությունների լեզվի ուսումնասիրության ընթացքում: Սակայն այս բոլորը, թեև բավական նյութ են տալիս, բայց քննված են ոչ պատմական բարբառագիտության տեսանկյունից:

Գրավոր աղբյուրների մեջ պետք է շեշտել հատկապես առանձին հեղինակների կամ մատենագիրների երկերի լեզվի ուսումնասիրության արդյունքները, մասնավորապես երբ հայտնի է, թե լեզվական ինչ միջավայրի ծնունդ է ուսումնասիրվող երկի հեղինակը (օրինակ՝ Եղիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Մովսես Խորենացի, Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի, Հովհ. և Կոստ. Նրզնկացիներ և այլք): Սակայն ցավով պիտի նշել, որ առանձին հեղինակների և նրանց երկերի լեզվի ուսումնասիրությունների գործը մեզ մոտ աններելիորեն անուշադրության է մատնված:

Այսպիսով, պատմական բարբառագիտության առջև ծառացած խնդիրները կարող են լուծվել միայն համեմատական բարբառագիտության ու լեզվաբանական աշխարհագրության արդյունքների օգտագործմամբ՝ սերտորեն զուգակցված պատմական շրջանից ավանդված գրավոր աղբյուրների մանրամասն ուսումնասիրության հետ:

Իր առջև կանգնած խնդիրների լուծման ժամանակ հայ բարբառագիտությունը, բնականաբար, պետք է առաջնորդվի ուսումնասիրության օբյեկտիվ շափանիշներով՝ հրաժարվելով բարբառների ծագման ու զարգացման, նրանց միջև եղած փոխհարաբերությունների մասին եղած կանխակալ պատկերացումներից ու կարծիքներից, հետազոտական պրակտիկայում կիրառվող միօրինակ կաղապարայնությունից ու պարզունակ նկարագրությունից, այլ կերպ ասած, նա պետք է ամեն կերպ ձգտի հաղթահարելու իր առաջընթացն արգելակող ամեն մի հետամնացություն:

ПУТЬ, ПРОЙДЕННЫЙ АРМЯНСКОЙ ДИАЛЕКТОЛОГИЕЙ, И ПЕРСПЕКТИВЫ ЕЕ РАЗВИТИЯ

О. Д. МУРАДЯН
Доктор филологических наук

Резюме

В статье дается краткий очерк развития армянской диалектологии. Исходя из задач современной лингвистики, автор выдвигает ряд проблем развития армянской диалектологии, останавливаясь на принципах составления армянского лингвистического атласа, на создании и развитии сравнительной и исторической диалектологии, одновременно определяя их конкретные задачи.